№ 192 Հոկտեմբերի 16 (28) 1881 Հոկտեմբերի 16 (28) № 192

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ստորագրողներից գինում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սիալ լօգիկա։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Անգլիա։ Ֆրանսիա։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։— ՅԱՅՏԱՐՈՏԱՒԹԻՒՆՆԵՐ։

ՍԻԱԼ ԼՕԳԻԿԱ

Ոչինչ չը կայ այդքան հեշտ, որքան գեղեցիկ ֆրազներ անել և այդպիսով մոլորեցնել ընթերցողներին։ Օրինակի համար ասում էք թէ վարժապետներին, որոնք ուրիշների պէս բարձր ուսում ստացած են և յայտնի չեն ոչ իրանց գիտնականութեամբ, ոչ էլ որ և է գրական աշխատանքներով, հարկաւոր չէ տալ այնպիսի ահագին ռոճիկներ, ինչպէս նորերումս Էջմիածնի ճեմարանն է տուել իր ռեկտորին և վարժապետներին, որոնց նմանները հարիւրներով կան այժմ իւրաքանչիւր հայաբնակ քաղաքում։ Պարզ է որ Կիրակոսեանը, որ տեսուչ է Երևանում, Շուշում, Ախալցխայում, կամ Ալէքսանդրապօլում, տեսնելով որ Պետրոսեանը, որ նրանից ոչինչով բարձր չէ, մի օրվայ մէջ յանկարծ գիտնական է դարձել և ստանում է 5000 տարեկան ռոճիկ, իսկ ինքն, նրանից ոչինչով պակաս չը լինելով, գուցէ էլ նրանից բարձր, ստանում է ընդամենը 1200 ռուբլ,—նոյնպէս կը սկսի պահանջել իր դպրոցի հոգաբարձութենից իր ռոճիկի աւելացնելը։ Այդ մենք անուանեցինք դեմօրալիզացիա։

Եւ ահա գեղեցիկ ֆրազներ ասող մեր հակառակորդները բացականչում են. դա անբարոյականացնող չէ, դա ընդհակառակն բարոյականացնող է. ի՞նչի բանկերում ծառայող մարդիկ կարող են մեծ ռոճիկներ ստանալ, իսկ ուսուցիչը, մտաւոր կեանքի գլխաւորը չէ կարող նոյնքան և աւելի ստանալ, և այլն և այլն։

Կարելի է այդ տեսակ ֆրազներին աւելացնել շատ ուրիշ ճոճող ֆրազներ, օրինակ. «մարդկութիւնը այն ժամանակ բաղդաւոր կը լինի, երբ ուսուցիչները, մտաւոր գլխաւորները աւելի կը վարձատրվեն իրանց աշխատանքում, քան թէ պաշտօնեան, գլխաւորականը, բանկիրը, փաստաբանը և այլն և այլն....» Եւ ընթերցող հասարակութիւնը հիացած կը լինի։

Բայց ռէալական հողի վրա կանգնելով, մարդը տեսնում է որ դրանք ֆրազներ են միայն։ Դժբաղդութիւնն այն է, որ գումար չը կայ մտաւոր աշխատողներին վարձատրելու։ Դժբաղդապէս մարդկութիւնը, առհասարակ, և հայոց հասարակութիւնը մանաւորապէս, ամենից քիչ վարձատրում է մտաւոր աշխատանք և եթէ այդպէս կարելի է ասել հասարակութեան բիւդժէտի մէջ այդ տեսակ գումար էլ չը կայ որ վարձատրի ուսուցիչներին այն չափով, որով վարձատրվում են այլ աշխատանքները։

Երկուսից մին։ Կամ մենք բոլորս, մտաւոր աշխատողները՝ տեսուչներ, ուսուցիչներ, խմբագիրներ, գրողներ, դերասաններ, պէտք է համոզվենք, որ Նահապետեանը և նրա վարժապետների խումբը ճշմարիտ գիտնականներ են,—այն ժամանակ պէտք է խոնարհվենք նրանց առջև, կամ եթէ հասկանում ենք որ նրանք մեզ պէս մարդիկ են և շատ բաներում մեզանից ստոր են, ապա կամայ պէտք է հարցնենք. ի՞նչի ես, տեսուչ կամ վարժապետ լինելով, և ոչինչով ստոր չը լինելով Նահապետեանից, պէտք է նրանից պակաս ռոճիկ ստանամ։ Ուրեմն ես էլ սկսում եմ պահանջել իմ ռոճիկի աւելացնելը. նոյն օրինակին հետևում են և իմ բոլոր ընկերներս և մեր դպրոցները, որոնցից ոչ մինը չէ կարող այդքան վարձատալ տեսչին և վարժապետներին, կամ ընտրված կը լինեն փակվել, կամ կարձակեն բոլոր բարձր ուսում ստացածներին, որոնց այդքան գովում են մեր հակառակորդները, և ստիպված կը լինեն բաւականանալ տիրացուներով։

Չը մոռանանք որ մեր գաւառական դպրոցներից ոչ մինը և նոյն իսկ Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը, չունեն Էջմիածնի ճեմարանի պէս նիւթական միջոցներ, մանաւանդ որ գաւառական դպրոցներից շատերի եկամուտները փոքր առ փոքր անցնում են Էջմիածնի ճեմարանի ձեռքը։

Դեմօրալիզացիա ասացինք այն պատճառով, որ բոլորն էլ կը սկսեն պահանջել աւելի քան թէ կարող է տալ ազգը։ Ուրեմն կամ բոլոր գաւառական դպրոցները կը փակվեն և կը մնայ միմիայն մի դպրոց ռուսաց հայերի մէջ, այն է Էջմիածնի ճեմարանը, որ ցանկալի չէ, ի հարկէ, կամ եթէ կը մնան էլ գաւառականները, նրանց մէջ այլ ևս ոչ մի համալսարանական չի մնի որպէս տեսուչ, կամ վարժապետ, որ նոյնպէս ցանկալի չէ։

Կրկնում ենք. եթէ մի ճանաչված գիտնական մարդ, մի անուն ունեցող ուսումնական ստանում է ճեմարանում հինգ հազար ռուբլ ռոճիկ, իսկ ես, մի հասարակ համալսարանական, մի կանդիդատ, մի դէյստվիտելնի ստուդենտ ստանում եմ գաւառական քաղաքում նրա ռոճիկի քառորդը, այդ ես շատ բնական կը գտնեմ։ Բայց եթէ ամեն բանում ինձ հաւասար Նահապետեանը, որին նման բարձրագոյն ուսում ստացածներ կարելի է հարիւրներով գտնել իւրաքանչիւր հայաբնակ քաղաքում, ստանում է անլսելի մի ռոճիկ, պարզ է որ ես, տեսուչ կամ վարժապետ լինելով գաւառական դպրոցում, կամ Ներսիսեան դպրոցում, կուզենամ որ իմ աշխատանքը նրա աշխատանքի նման վարձատրվի։ Այն ժամանակ դպրոցները կամ պէտք է փակվեն, կամ պէտք է զրկվեն համալսարանական մարդկանց ծառայութենից. ահա սրա մէջն է դեմօրալիզացիան։

Նահապետեանը մանկավարժ է, ասում են գեղեցիկ ֆրազներ անողները։ Նա սպէցիալիստ, մասնագէտ մանկավարժ չէ, պատասխանում ենք մենք. նա այնքան մանկավարժ է, որքան իւրաքանչիւր համալսարանական, զարգացած մարդ և երբէք մասնագիտաբար չէ պարապել մանկավարժութեամբ։ Նա սովորել է բնական գիտութիւնները, յետոյ եղել է տնային վարժապետ, յետոյ Գայեանեան դպրոցի ուսուցիչ և տեսուչ, յետոյ Ներսիսեան դպրոցի ուսուցիչ և տեսուչ։ Ամեն համալսարանական մարդ, որ քիչ թէ շատ բան սովորել է, դիպլոմ ունի, յետոյ պարապել է ուսուցչութեամբ, նոյնքան մանկավարժ է։

Մի գիտնական, որին կը հրաւիրի ճեմարան, մի Պատկանեան, մի Էմին, մի Գամբարով, մի Ներսիսեան, թէև նրանցից ոչ մինը չեն ստանում հինգ հազարներ, այնուամենայնիւ կարող էին պատասխանել. «մենք զրկվում ենք ամեն բանից, համալսարանին, գիտութեանը ծառայելուց, կընայով Վաղարշապատի պէս մի հեռու տեղ, ուրեմն դոնէ վարձատրեցէք մեզ օրինաւոր կերպով։» Բայց մի Նահապետեան չէ կարող նոյնն ասել, երբ որ տեսնում է որ նրա պէս թէ աշխարհական, թէ հոգևորական համալսարանականները ամեն քայլափոխում տեսչի կամ վարժապետի պաշտօնում ամենահամեստ ռոճիկներով հանդիպում են և Ագուլիսում, և Շուշում և Շամախում և Ալէքսանդրապօլում և Երևանում և Թիֆլիսում և նոյն իսկ Վաղարշապատում....

Վերջին խօսք էլ։ Այն հասարակութեան մէջ, որտեղ դեռ ևս մտաւոր աշխատանքի ոչ մի ճիւղ չէ վարձատրվում, որտեղ մտաւոր աշխատողից դեռ ևս պահանջվում է անձնազոհութիւն, անձնուիրութիւն, անվարձ աշխատանք և մինչև անդամ նիւթական զոհաբերութիւն իր սեփական գրպանից, որպէս զի ժողովուրդը կրթվի, զարգանայ, որտեղ դպրոցները, թէև բազմաթիւ են, բայց բոլորն էլ աղքատ են և ոյսօր նրանցից մին, վաղը մի ուրիշը փտանդի մէջ են նիւթականի պակասութեան պատճառով փակվելու,—այդ տեսակ հասարակութեան մէջ ազնիւ չէ պահանջել իր համար այնպիսի ահագին ռոճիկ, որի քառորդն էլ մի այլ դպրոց չէ կարող տալ, օգուտ քաղելով այն հանգամանքից, որ այդ կենարօնական դպրոցը աւելի հիշտութիւն ունի հաւաքել ազգի փողերը և միջոց ունի մնացած դպրոցների եկամուտները դէպի ինքն գրաւել։

Ազնիւ էլ չէ գիտնական չը լինելով, այլ հասարակ համալսարանական, որի ուսումով կարելի է լինել և ուսումնարանի լաւ ուսուցիչ, և տպարանի օրինաւոր կառավարիչ, և տնային ընտիր վարժապետ և վերջապէս միջնակարգ դպրոցի գոված տեսուչ,—պահանջել, առանց գիտնական լինելու, մի ճշմարիտ գիտնականին վայել ռոճիկ և յանդգնել յանձն առնել ճեմարանի, բարձրագոյն դպրոցի, Ակադեմիայի ռեկտորի պաշտօնը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 14 հոկտեմբերի

«Մշակի» այս տարվայ 185 թերթում մի ոք, ծածկված երկու կ. կ. տակ, արժանացրել է ամսիս 3-ին ընտրված ուսուցչական ընդհանուր ժողովի կարգադրող մասնաժողովին իր մի քանի նկատողութիւններով և մասնաւորապէս այդ մասնաժողովին անդամ ընտրված պ. Ցով. Չիգիանեանին և ինձ։

Թողնելով պ. Կ. Կ. իր որպիսի և կամի ներում մասին և կամի անձնական կարծիքը ունենալ, իբրև իր սեփական իրաւունքը, ինչպէս և ամենին պատկանում է այդպիսի իրաւունք նոյն իսկ պ. Կ. Կ. վերաբերութեամբ, ես պարոնին չեմ կարող ներել, որ նա ասում է օրինակ իմ մասին՝ թէ ես իբր «այն մարդկերանցից եմ՝ որոնք անցեալ տարի ընտրվեցան մասնաժողովի անդամներ և որոնք իսպառ հրաժարվեցան, չը համակրելով և անկարելի ու ապարդիւն համարելով կայանալիք ժողովը», և թէ ես՝ Քալանթարեանցս առանձնապէս կարծում եմ եղել՝ որ «այն մօտաւորապէս ծախսուելիք 5.000 ռուբլ (?) այնպիսի մի մեծ գումար է որով կարելի է 15—20 դպրոց բանալ և խորհուրդ տուել գործադրել վերջին նպատակի համար»։

Եթէ պ. Կ. Կ. չէ կամեցել անպատճառ սխալեցնել հասարակական կարծիքը որ և իցէ ծածկված նպատակի համար, ուրեմն մոռացել է իր թոյլ յիշողութեամբ այն որ՝ 1) ես ոչ անցեալ և ոչ այս տարվայ ընտրութիւնից երբէք չեմ հրաժարվել, հրաժարվելու էլ առիթ չունենալով։ Այս կը հաստատեն թէ շատերը այն 30 և 22 անձինքներից, որոնք ներկայ էին անցեալ և այս տարվայ ընտրութեան ժողովներում և թէ նոյն իսկ ժողովների արձանագրութիւնները։ Ընդհակառակը շատերը կը վկայեն՝ որ ես նրանց թըւումն էի, որոնք ուսուցչական ժողովների յայտնի օգտաւէտութիւնը և նրանց համար կարողութեան չափ աշխատելու պարտքը խոստովանում էին և յանձն էին առել դեռ անցեալ տարվանից, մինչև որ փորձը ցոյց չը տուեց՝ որ հարկաւոր էր փոխել այս տարի գործելու եղանակը և գործողների մի քանիսին։ 2) Որ ես յիրաւի՝ մի քանի մոքեր յայտնել եմ ժողովներում, որ պէտք է լինել, ի մէջի այլոց զգայլ և ճիշտ մեր ձեռնարկած գործի միջոցների մասին առհասարակ և նիւթականինը մասնաւորապէս, որպէս զի բոլոր գործը չը վերջանայ միայն մի սնափառ աղմուկով, չունենալով հարկաւոր միջոցները ամենայն խոհեմութեամբ և լրջութեամբ որոշած և ապահոված։ Եւ 3), որ ես ոչ իբրև «խորհուրդ» կամ մի որոշեալ առաջարկութիւն, այլ իբրև մի հետաքրքրական հարց, այն էլ ոչ ժողովի նիստում, այլ առաջուց—մասնաւոր չրջանում (եթէ կամենում է մտաբերել պ. Կ. Կ.) փորձեցի պարզել՝ թէ այդքան մեծ գումարը 15.000—20.000 ռուբլի (և ոչ «5.000 ր.» ինչպէս ասում Կ. Կ.), որի համար առաջուց խօսվում էր երբ բանը ընդհանուր ուսուցչական ժողովին էր գալի. փոխանակ ընդհանուր ժողովի, — չէր բերի արդեօք աւելի չոչափելի օգուտ, գործ դրած լինելով նոր 5—10 դպրոցներ բանալու վրա (և ոչ «15—20», ինչպէս ասում է Կ. Կ.), եթէ յաջողվեր այդպիսի մի գումար ձեռք բերելու։ Զը գիտեմ՝ պ. Կ. Կ. որքան լաւ է հասկանում «փաստաբաններից» թէ ինչ գումարով ինչ ուսումնարաններ կարելի է բաց անել, իսկ ես, որ ոչ պակաս տարիներով, գուցէ քան ինքն Կ. Կ. ուսուցչութիւն ունեմ արած արքունի ուսումնարանում, հաստատում եմ, ուսուցչական ժողովը ապարդիւն չը համարելով, որ 15.000—20.000 ռուբլ գումարով կարելի է 5—10 մանր սկզբնական դպրոցներ բանալ, մանաւանդ այնտեղ, որտեղ որ դրանք ամենից շատ հարկաւոր են,—հայ գիւղօրայքում։ Բայց թող հանգստանայ պ. Կ. Կ.—ինչպէս երևում է մօտ հանգամանքներից, ոչ այդքան գումարի պէտք կայ նոյն իսկ ընդհանուր ուսուցչական ժողովի համար, ինչպէս 15.000—20.000 ռուբլ և ոչ էլ տարակուսութիւն պիտի լինի ում և իցէ համար թէ այդքան մեծ գումարը այսպէս փոքր հասարակութեան մէջ որտեղ աւելի օգտաւէտ գործածութիւն կը ստանար—ուսուցչական ժողովում՝ թէ նոր դպրոցներ բանալում. այնպէս որ ուսուցչական ժողովի օգուտը և արդիւնքը կը լինեն ակնյայտնի կերպիւ գերազանց, քան նրա համար անելիք զոհաբերութիւնը։

Հիմայ, պարոն խմբագիր, տեսնում էք թէ որքան հեռի են իրերի ճշմարիտ դրութիւնից պ. Կ. Կ. նկատողութիւնները և որքան մեղանչում է նա հասարակական գործի դէմ, հանդէս դուրս գալով այդպիսի գործերին ամենից քիչ հարկաւորն ամենից քիչ ձեռնտու անճշտութիւններով.

Խաչատուր Քալանթարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պ. Բաֆֆիի Ագուլիսից գրած նամակը «Մշակի» մէջ կարդալուց յետոյ, պ. Երիցեանը հեռաքրքրվեց տեսնել այն թերթիկը, որ մեր աշխատակիցը մեզ ուղարկել է և որի վրա կայ բացատրութիւն բևեռագրերի. Պ. Երիցեանի կարծիքով այդ թերթիկի վրա գտնված գրութիւնը սեպաձև տառեր չեն, այլ մի տեսակ ծածկագրութիւն են. Մենք մեր կողմից համեմատեցինք այդ նշանները հայր Սարգսեանի «Տեղագրութիւնք» գրքի մէջ գտնված Վանի բևեռագրերի հետ և համոզվեցինք որ թերթիկի վրա եղած նշանները ոչ մի նմանութիւն չունեն Վանքի սեպաձև տառերի հետ.

Մեզ գրում են Պարսկաստանի Թավրիզ քաղաքից հետեւեալը. «Սեպտեմբերի 26-ին այս կողմերում եղանակը յանկարծ ցրտեց և ոչ միայն լեռները, այլ և դաշտերը ծածկվեցան ձիւնով. Դեռ չը քաղված հաղոդի այգիները, բրինձի հունձքը և չը հաւաքված շատ մշակութիւններ մնացին թանձր ձիւնի տակ. Նոյն օրում գնացող տեղերում բքաբեր փոթորիկներ էին պատահել, քարավանների անասունները և մարդիկ սառել էին.»

ՇԱՄԱԽՈՒՑ ստացանք 40 ռուբլի, բաժանորդագին «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի, հետեւեալ անձինքներից. Աղ-բէկ Լալայեանց, Գէորգ Կաճկաճեան, Միքայէլ Ներսիսեան, Միքայէլ բէկ Աւշարեան, Ադ. Տէր-Սահակեան, Խրիստաֆոր Նազարեան, Ղահրաման Մէլիք-Մուրատեան, Զահանկիր Թառահեան, Առաքել Օսմանցեվ, Աստուածատուր Գալուստեան, Միքայէլ Նազարեանց, Մարտիրոս Ղազարեան, Յարութիւն Տէր-Եսայեան, Աբրահամ Քասպարեան, Ալէքսանդր Նաջարեանց. Առաջվայ 1,000 ռուբլ 13 կոպ. բաժանորդական գումարի հետ, կանի 1,040 ռուբլ 13 կոպէկ.

Դարձեալ կրկնում ենք մեր բաժանորդներին, որոնք դեռ չեն վճարել «Մշակի» անցեալ և այս տարվայ բաժանորդագինը, որ չուտով հասցնեն խմբագրութեանը իրանց վրա մնացած պարտքը.

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են որ այդտեղի արքունական երկդասանեան ուսումնարանի տեսուչը տեղափոխվում է Երեւան. Ամենքը հաւատացած են որ այդ դպրոցը կարող էր աւելի առաջադէմ լինել մի այլ տեսչի ձեռքում. Մինչև անգամ գիւղական միդասանեան դրպրոցներ, ինչպէս, օրինակ, Բարալէթի գիւղի դպրոցը, աւելի առաջադէմ են, քան թէ վերև յիշված ուսումնարանը.

ԴՇԼԱՐԻՑ մեզ գրում են. «Այստեղի կլուբը լաւ դրութեան մէջ չէ. Արդէն վեց ամիս է բուֆէտ չունի. գիշերները ձուաձեղից աւելի ոչինչ չէ կարելի ստանալ. Ընթերցարանում կարդալ անհնարին է, որովհետև անդամները փոխանակ կարդալու, հաւաքվում են սենեակում և բարձր մասլահաթներ են անում. Ասում են որ այս ձմեռվայ համար բաւական մեծ գնով հրաւիրված է լաւ երաժշտութիւն. Զարմանալի բան. ուտելու բան չը կայ, իսկ երաժշտութիւն են հրաւիրում, չը նայելով որ կլուբը մեծ պարտքերի տակ է ընկել.»

Երկկ տպեցինք պ. Երիցեանի դասախօսութեան պրոգրամը. Պարոնը կարդալու է իր դասախօսութիւնը հայերէն լեզուով, Արծրունու թատրոնում, չորեքշաբթի և ուրբաթ օրը առաջիկայ շաբթին և նոյնպէս չորեքշաբթի և ուրբաթ օրը հետեւեալ շաբթին.

ՍՂՆԱԽԻՑ ստացանք 25 ր. 40 կ. բաժանորդագին «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի, հետեւեալ անձերից. Ստեփաննոս աւագ քահ. Տէր-Ստեփանեան, Սարգիս Մուսեան, Սարգիս Շահվերդեան, Абрамъ Моисѣевичъ Крынскій, Марія и Станиславъ Дейнаровичи, Ղազար Յարութիւնեան, Սերգէյ Պետրիաշվիլի, Թէդո Ճամիաշվիլի, Միխա Խոչիտաշվիլի, Դաթիկո Բակալաշվիլի, Իվանէ Կալաշվիլի, Գրիգոր Զիգինեան, Ղազար Նօնեան, Սարգիս Նօնեան, Յարութիւն Օթարեան, Նիկողայոս Օնանեան, Յակոբ Փիրալեան, Յովհաննէս Շլահամեան, Եագոր Լիսինեան, Յարութիւն Սարգիսեան, Աստուածատուր Լիանոզեան, Ստեփան Եագորեան, Արէջ Շահվերդեան, Աստուածատուր Ամիրխանեան, Կոնստանտին Յարութիւնեան, Давидъ Михайловичъ Зейдаловъ, Սիմէոն Ազարեան. Ընդամենը 25 ռուբլ 40 կոպ., իսկ առաջվայ բաժանորդական գումարի հետ անում է 1065 ռուբլ 53 կոպէկ.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

Պարնելին կալանաւորելու մասին լուրը ստացվեցաւ Լօնդօնում հէնց այն րոպէին, երբ Գլադստօն Լօնդօնի քաղաքային վարչութեան մէջ ընդունում էր քաղաքի ներկայացուցիչների ուղերձը. Նա պատրաստվում էր մի ճառ արտասանել, երբ նրան յանձնեցին հեռագիրը. Հեռագիրը կարդալուց յետոյ Գլադստօն հաղորդեց ժողովին, որ կալանաւորման միութեան առաջնորդը կալանաւորված է. Ժողովը բարձրաձայն „կեցցէով" պատասխանեց. Այդ ժամանակ Գլադստօն ասաց հետեւեալը. «Այն մարդու կալանաւորելը, որ ամենից շատ աշխատում էր ընդհատել օրէնքի ոյժը և գործերի այնպիսի դրութիւն ստեղծել, որ կարող էր վերջանալ իրլանդական ժողովուրդը անիշխանութեան զոհ դարձնելով, առաջին քայլն է օրէնքը, կարգապահութիւնը, սեփականութեան իրաւունքը և պատուութիւնը Իրլանդիայի մէջ պաշտպանելու համար և յայտնի է, որ պրանք քաղաքական կեանքի և քաղաքակրթութեան առաջին տարրերն են. Մենք յոյս ունենք, որ այժմ իրլանդական ժողովուրդը, որոնք ազգաբնակութեան մեծամասնութիւնն են կազմում, կը համաձայնեն գործադրել կալուածական նոր օրէնքը. Այն մարդիկ, որոնց դէմ մենք մաքառում ենք, աշխատում են օրէնքի և ժողովրդի մէջ կանգնել և ժողովրդին իրանց տեսակէտից հասկացնել օրէնքներ վայելելու բարօրութիւնը. Մենք իրլանդական ժողովրդից երկիւղ չունենք կրում. Մենք վախենում ենք, որ յայտնի անձինք չը վարակեն այդ ժողովրդին, վախեցնելով նրան և ստիպելով հրաժարվել իր սահմանադրական իրաւունքներից. Մենք Իրլանդիայի տեղական ինքնավարութեան դէմ ոչինչ չունենք և ես ուրախութեամբ կողջունեմ այդ քայլը, միայն թէ նա չոչնչացներ պարլամենտի բարձր իշխանութիւնը». Պարնելին կալանաւորելը խիստ տպաւորութիւն գործեց Լօնդօնի բոլոր շրջանների վրա և շատերը հաւանում են այդ կարգադրութիւնը. Մինչև անգամ „Pall-Mall-Gazette", որ մինչև այժմ ընդդէմ էր սոսիպոդական օրէնքներին, նկատում է, որ Գլադստօնի յայտնութիւններից յետոյ Լիդսի մէջ Պարնելի կալանաւորութիւնը անհրաժեշտ էր. Կառավարութիւնը մի շարք միջոցների է ձեռնարկել կալուածական նոր օրէնքը Իրլանդիայի մէջ գործադրելու համար.

Հոկտեմբերի 5-ին Կլերկվելլինի մէջ մի ժողով կայացաւ, որին մասնակցում էին 4000 անդամներ. Ժողովը բողոքեց Պարնելին կալանաւորելու դէմ. Իրլանդիայի մի քանի այլ տեղերումն էլ նշանաւոր անկարգութիւններ են պատահել. Մալլօի մէջ ամբոխը քանդեց այն անձանց խանութները, որոնք Պարնելին կալանաւորելու պատճառով չը փակեցին իրանց խանութները. Կառավարութիւնը նախազգուշական միջոցներ է գործադրում, որպէս զի Իրլանդիայի մէջ ապստամբութիւն չը սկսվի. Իրլանդիայի մէջ եղած զօրքերի բոլոր օֆիցերները ծառայութեան են հրաւիրված. Դուբլինի զօրքերը ուժեղացրած են և հրաման են ստացել չը հեռանալ զօրանոցներից. Բանտերի պահապան զինուորներին օգնութիւն է հասցրած. Պահապանների թիւը աւելացրած է.

ՖՐԱՆՍԻԱ

Հոկտեմբերի 13-ին կայացաւ Ֆրանսիական մինիստրների խորհուրդը, որի ժամանակ ոչ մի վճիռ չը կայացաւ. Մինիստրները սպասում էին Գամբետտայի և Գրեվիի տեսութեան հետեւանքներին. Խորհրդից յետոյ Ժիւլ Ֆերրի ուղեւորվեցաւ Գրեվիի մօտ և յայտնեց նրան, թէ մինիստրները պատրաստ են հրաժարական տալ, հէնց որ Գրեվի այդ բանը կը ցանկանայ. Այդպիսով Գրեվի կարող էր ազատ բանակցել Գամբետտայի հետ. Ժիւլ Ֆերրի դրանից առաջ տեսել էր Գամբետտային և նրա հետ ունեցած խօսակցութիւնը պատմել էր հանրապետութեան նախագահին. Այդ պատճառով Գրեվի հրաւիրեց Գամբետտային Ելիսեան պալատը և նա հասաւ այնտեղ հէնց այն րոպէին, երբ այնտեղից դուրս էր գալիս Ֆրանսիական դեսպանը Բերլինում. Գամբետտային պաշտօնապէս չառաջարկվեցաւ նոր մինիստրութիւն կազմելու մասին, բայց համաձայնութիւն կայացաւ այդ գործի յանձնելու ժամանակի վերաբերութեամբ. Պետական այդ երկու գործիչների խորհրդակցութիւնը ցոյց տուեց, որ Գամբետտայի կառավարչական նախագիծը Գրեվիի հայեացքներին ընդդէմ չէ. Գամբետտա, հասկանալով այժմեան մինիստրութեան դժուար դրութիւնը, այնու ամենայնիւ խորհուրդ տուեց Գրեվիին ազգային ժողովների գումարվելուց յետոյ նշանակել նոր մինիստր-նախագահ և թոյլ տալ նրան, որ ազատութեամբ ընտրէ իր օգնականներին պատգամաւորների ժողովի մեծամասնութեան արամադրութեան համեմատ. Գրեվի պատասխանեց, որ այդ խորհուրդը համապատասխանում է նրա սեփական դիտաւորութիւններին, որ նա ինքը խոստովանում է ապագայ կառավարութեան միակերպութեան և ազատութեան անհրաժեշտութիւնը. Գամբետտայի „Voltaire" լրագիրը նկատում է, որ այդ տեսութիւնը սկզբնական համաձայնութեան բնաւորութիւն ունէր. Գործերը մի քանի ժամանակ այժմեան դրութեան մէջ կը մնան, որովհետև հարցը օրինաւոր կերպով մեկնելու համար դեռ ևս մի քանի տեսութիւններ են հարկաւոր Գամբետտայի և Գրեվիի մէջ. „Paris" լրագրի խօսքերի համեմատ, որի խմբագիրը Գամբետտայի բարեկամ է, տեսութեան ժամանակ չէ խօսվել անյապաղ նոր մինիստրութիւն կազմելու մասին. „Տեսութենից երեք օր առաջ, գրում է այդ լրագիրը, Գրեվի մի նամակով խնդրեց Գամբետտային այցելել իրան գործերի դրութիւնը ընդհանրապէս քննելու համար. Գամբետտա իսկոյն ընդունեց այդ հրաւէրը. Խօսակցութիւնը վերջին ընտրութիւնների պատճառով ստեղծված դրութեան մասին էր. Գրեվի խոստովանում էր այդ ընտրութիւնների առաջադէմ բնաւորութիւնը և չափաւոր վերանորոգութիւնների անհրաժեշտութիւնը—Հասկանալի է, նկատել է Գրեվի, որ Ֆրանսիան ցանկանում է այդպիսի քաղաքականութեան հետևել և նա պէտք է իրագործվի այն մարդուց, որ առաջարկել է այդ քաղաքականութիւնը և նրա մշտական պաշտպան է եղել.» Գրեվիի „La Paix" լրագիրը նկատում է, որ խօսակցութիւնը նոր մինիստրութեան մասին էր առանց դատողութիւն տալու պրոգրամի վերաբերութեամբ.

Լրագիրները անդադար մանրամասներ են հաղորդում Գրեվիի և Գամբետտայի տեսութեան մասին. Տեսութիւնը չափազանց բարեկամական եղել և նրա ժամանակ խօսվել է նոյնպէս և արտաքին քաղաքականութեան վերաբերութեամբ. Գերմանիայի մասին Գամբետտա ասել է, որ նա ոչից մինչև գլուխ զինաւորված է.» Ներքին հարցերի վերաբերութեամբ պետական այդ երկու գործիչներն էլ միատեսակ կարծիքներ են յայտնել. Փարիզի մէջ սպասում են լորդ Գրենվիլին, որ աշխատում է անգլո-ֆրանսիական դաշնակցութիւն կազմել երեք կայսրների դաշնակցութեանը ընդդիմադրելու համար.

Այդ նախագծի մասին վաղուց խօսում են, բայց նրա իրագործվելը կասկածելի է. Այդ դաշնակցութեան կուսակիցները մեծ յոյս են դնում Գամբետտայի մինիստրութեան վրա, մանաւանդ որ Գամբետտա մտադիր է անձամբ ուղղութիւն տալ Ֆրանսիայի արտաքին քաղաքականութեանը. Թէ որքան մեծ յոյսեր են դնում Գամբետտայի մինիստրութեան վրա, կարելի է դատել այն հանգամանքից, որ Փարիզի բօրսան իսկոյն բարձրացրեց իր տրամադրութիւնը, հէնց որ տեղեկութիւն ստացաւ, թէ Գամբետտա հրաւիրված է Գրեվիի մօտ. Այդ օրը բոլոր արժէթղթերի գները բարձրացան. Առհասարակ ամենքը Գամբետտայից շատ են սպասում, գուցէ աւելի, քան թէ նա կարող է անել.

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

Կ. Պոլիս, 4 հոկտեմբերի 81

Բանակցութիւններն կը շարունակվին պետանաց և Բ. Դրան միջև Հայաստանի բարեկարգութեանց համար, բայց դժուար է ճիշտ իմանալ թէ ինչ հիմերու վրայ. Դեսպանք հարկադրեալ են, եւրոպական զանազան հարցերու պատճառաւ, քաղցրութեամբ վարուիլ Բ. Դրան հետ. «Լէվանդ Հերալտ» որ սերտ յարաբերութիւններ ունի Անգլիոյ դեսպանատան հետ, յայտնի կերպով այս միտքը կը բացատրէր թէ՝ տէրութեանց ներկայացուցիչք պիտի չը բանեցնեն Բ. Դրան վրայ ո և է ճնշում հայկական խնդրոյ համար, այլ պիտի բաւականանան բարեկամական յորդորներով. Եւրոպական տէրութիւններն որք կը զբաղին այսօր գլխաւորապէս չէ թէ հայկական խնդրով, այլ Արեւելքի ապագայ կազմակերպութեան հարցովը. հաւանական է որ Հայաստանի համար ունենան այնպիսի դիտաւորութիւններ, որք տարբեր ըլլան մեր յուսացածներէն... Բայց ինչ որ ալ ըլլայ ապագան առ այժմ Կ. Պոլսոյ մէջ ամենուն ուշադրութիւնը գրաւած են Թիւրքիոյ գանձային բարեկարգութեանց և 61-րդ յօդուածի գործադրութեան խնդիրներն. 61-րդի գործադրութեան առթիւ այս օրերս հրապարակ ելաւ վերտին այն լուրը թէ՝ կառավարութիւնը Հայաստան պիտի խրկէ լիազօր քննիչ մը կամ թէ լիազօր բարեկարգիչ մը. «Լէվանդ Հերալտ» և «Ֆառ դիւ Պոսֆոր» կը գրեն ամենէն աւելի այս լուրին վրայ. «Լէվանդ» կը հաստատէր լիազօր պաշտօնէի մը Հայաստան խրկուելուն լուրը և կը ծանուցանէր թէ այս պաշտօնին նշանակուած է Ղազի Ահմէտ Մուխթար բաշան. —«Ֆառ» մերթ անհիմն կը յայտարարէ Հայաստան լիազօր պաշտօնեայ մը խրկուելուն լուրը, և մերթ կը հաստատէ. վերջին պարագայիս մէջ կը ծանուցանէ թէ Տատեան Յարութիւն պէյ պիտի լինի այդ լիազօր պատուիրակը. Իրարու հակառակ այս լուրերու մասին մենք հետևեալ